



Հակոբ Պարոնյան

Ազգային շոշեր

ՄԻՄՈՆ Խ. ԵԱԶԸՃԵԱՆ

Միմոն Խ. Եազըճեան, պատկերահան եւ դասատու գծագրութեան, ծնաւ ի Սամաթիա 1851 սեպտեմբեր 18-ին: Չորս տարու եղած միջոցին տունին մէջ ձեռքն անցածը կոտրելով, թափելով նկարչութեան յարմարութիւն ունենալը յայտնեց: 1865-ին Ազգ. հիւանդանոցի վարժարանը դրուեցաւ, որպէսզի լեզու եւ գիտութիւն սորվի, բայց ինքն դպրոց մտնելուն պէս՝ մէկէն ի մէկ ցատկեց ու գծագրութեան ճիւղերուն փաթտուեցաւ: Այն ատեններն ազգ. վարժարանաց մէջ գծագրութեան ոչ ճիւղն կար, ոչ ալ տերեւներն. Միմոն ինք իրմէ կ'աշխատէր եւ որովհետեւ գծագրութեան համար ծնած էր, քիչ ժամանակի մէջ ինքնօգնութեամբ այնչափ յառաջ գնաց, որ դպրոցի մէջ գտնուող աշակերտաց ամէնուն ալ պատկերները կը քաշէր, ոտքերն ու ձեռքերը շատ աղուոր կը նմանցունէր, դէմքերը միայն չէր կրնար նմանցունել: Ծնողքն նկատելով, որ գաւակնին դասերուն մէջ օրըստօրէ կը տկարանայ կոր, թերեւս այն տեղի կլիման դաս սորվելու չօգնէր կոր, ըսին ու անկից հանելով Քուզկունճուխի դպրոցը դրին, դժբախտաբար այս տեղի կլիման դաս սորվելու չօգնէր կոր, ըսին, ու անկից հանելով, Սելամսըզի վարժարանը դրին: Այս վարժարանին մէջ ալ Միմոնիկն առտուրնէ մինչեւ իրիկուն գծագրութեան կը պարապէր, ծառեր, անտառներ, առուակներ, ոչխարներ, հովիւներ, անուշ ջուրեր կը նկարէր. դասատուն հայերէնի դաս հարցուցած միջոցին՝ գծագրած պատկերները կը ցցունէր: 1867-ին վերջապէս այս վարժարանէն ալ ելնելով՝ սեղանաւորի մը քով գրագրութեան դրուեցաւ, ուր կրկնատումարի դրութեամբ բոլոր տեսրակները պատկերներով լեցուց, սենեակին հետ յարաբերութիւն ունեցող անձանց

անուններն գրելու տեղ՝ անոնց պատկերները կը գծէր, ճակատնուն աջ կողմը պարտի կը գրէր, ձախ կողմն ալ պահանջ է. աչքերուն մէջը թուականները կը գրէր, եւ քիթով ալ տետրակն երկու երեսի կը բաժնէր: Մէկ ականջին վրայ մուտք եւ միւս ականջին վրայ ելք կը գրէր, մէկ խօսքով մարդոց դէմքն կրկնատումարի կը դարձունէր, կը ձգէր:

Տէրն երբ տեսաւ, որ հաշուոյ տետրակներն ալպումի կերպարանք առած են, աւելի խնդաց քան թէ վշտացաւ, ապսպրելով միանգամայն, որ տետրակներու մէջ ուրիշ անգամ պատկեր չնկարէ. Միմոնիկն պատասխանեց, թէ ուրիշ դրութեամբ տետրակ բռնել անհնար է իրեն, եւ այս պատասխանը տալէն ետքը սենեակէն առաւ քալեց: Տարի մը ամբողջ նորէն նկարչութեան ետեւէն ինկաւ, նկարչութիւնը կը փախչէր: Միմոնիկը ետեւէն կը հալածէր, մինչեւ որ գայն ձերբակալեց նէ՝ շատ յոգնեցաւ, որովհետեւ գեղարուեստ մը ձեռք ձգելը աւագակապետ մը ձեռք ձգելու չափ դժուար է: 1868-ին գծագրութեան դասատու եղաւ նախ տոներու, եւ հետզհետէ ազգ. վարժարաններու մէջ: Իւր դաս տալու եղանակը շատ դիւրուսոյց է, այնպէս որ տասը տարւոյն մէջ ոտք մը գծել սորվողն այս դիւրուսոյց եղանակին շնորհիւ հինգ տարւոյն մէջ կը սորվի: Եւ որովհետեւ իւր կենսագրութեան այն կտորին եկանք, որ շահու խնդիրն կայ, կը պարտաւորինք լրջաբար խօսելով ըսել, թէ Միմոն Էֆենտին ամէն ջանք կը թափէ աշակերտները քիչ ժամանակին մէջ յառաջ մղելու. չէ այն դասատուներէն, որոնք գիտցածին ուրիշներու չգողցնելու համար երկաթեայ սնտուկի մէջ եւ բանալիի ներքեւ կը պահեն: Միմոն Էֆ. Եագրճեան առաջին կրնայ համարուիլ ծաղրանկար գծելու մասին. ժամանակաւ Մեղուի եւ երբեմն Թատրոնի մէջ տեսնուած աղուոր ծաղրանկարներն անոր մատիտին արդիւնքն են:

Միմոն Էֆենտի միջահասակ եւ պարկեշտ երիտասարդ մ'է: Քիչ մը կրակոտ է, այնպէս որ քիթին ծակերէն շունչ արտադրած ժամանակը կը կարծուի թէ Շիրքեթի Խայրիէի շոգենաւներէն մէկուն ծխնելոյցն է, որ կը ծխէ: Իւր դէմքը կը յիշեցունէ այնպիսի մարդու մը դէմք՝ որուն տասը հազար ոսկիով աղջիկ մը կու տան եւ ինք կը մերժէ: